ՆԱԽԱԳԻԾ 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"___" _____ 2010թ.. N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի "Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին" N 1038-Ն որոշման հավելվածի "Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում" (այսուհետ՝ ցանկ) կատարել հետևյալ լրացումները.

1) Ցանկի 032500 տողից հետո լրացնել նոր 032600 տող՝ հետևյալ բովանդակությամբ.

032600	Եկեղեցաբանություն	62	Եկեղեցաբանության բակալավր
		68	Եկեղեցաբանության մագիստրոս

2) Ցանկի 032600 տողից հետո լրացնել նոր 032700 տող՝ հետևյալ բովանդակությամբ.

032700	Եվրոպագիտություն	68	Եվրոպագիտության մագիստրոս

3) Ցանկի “300000 Ռազմական կրթություն» մասնագիտությունների խմբից հետո լրացնել նոր տողեր՝ հետևյալ բովանդակությամբ.

310000	Ոստիկանական կրթություն		
310100	Ոստիկանական գործ	62	ոստիկանության բակալավր
		68	ոստիկանության մագիստրոս

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ" ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

"Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի հմ. 1038-Ն որոշման հավելվածի "030000-Հումանիտար գիտություններ» մասնագիտությունների խումբը « 032600-Եկեղեցաբանություն" մասնագիտությամբ լրացնելը՝ «62-եկեղեցաբանության բակալավր» և « 68- եկեղեցաբանության մագիստրոս » որակավորումներով, պայմանավորված է Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Մայր Աթոռին կից բազմաթիվ հաստատություններում և կրթօջախներում եկեղեցաբանության մասնագետների աճող պահանջարկով : Հարկ է նշել, որ եկեղեցաբանությունը երբեք համակարգված չի եղել և հիշյալ մասնագիտության ձեռնարկումը առաջին քայլն է կարևորագույն այդ գիտակարգի ուսումնասիրությունը կայուն հիմքերի վրա դնելու համար :

Ցանկի "030000-Հումանիտար գիտություններ» մասնագիտությունների խումբը «032700-Եվրոպագիտություն» մասնագիտությամբ լրացնելը՝ « 68-Եվրոպագիտության մագիստրոս» որակավորմամբ, պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի Եվրոպական ինտեգրմանը միտված քաղաքականությամբ: Մի շարք բուհերում հիմնադրվել են UNESKO-ի ամբիոններ (ԵՊՀ, ԵՊԼՀ, ՀՊՏՀ), հիմնադրվել են մասնագիտական գրադարաններ, կապեր են հաստատվել եվրոպական ուսումնասիրություններով զբաղվող եվրոպական հեղինակավոր համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների հետ : Առաջադեմ փորձի փոխանակման նպատակով իրականացվել են բազմաթիվ փոխայցելություններ :Հարկ է նշել, որ « Եվրոպագիտություն » մասնագիտությունը մեծ հեղինակություն է վայելում հանրապետության ուսանողության շրջանում, որի վկայությունն է դիմորդների քանակը և հետազոտողների ներգրավվածությունը:

Ցանկի «310000-Ուստիկանական կրթություն» մասնագիտությունների խումբը «310100-Ուստիկանական գործ» մասնագիտությամբ լրացնելը՝ «62-ուստիկանության բակալավր» և «68-ուստիկանության մագիստրոս» որակավորումներով, պայմանավորված է «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ուստիկանական գործունեության ոլորտում 2010/2011 ուստարվա բարեփոխումների ծրագրի հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 354-Ն որոշման 2-րդ կետով հաստատված ծրագրով, համաձայն որի, հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը, ՀՀ Ուստիկանության համակարգում նախատեսվում է իրականացնել կրթական բարեփոխումներ:

Ա.Աշոտյան

Տեղեկանք

"Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեի ծախսերի կամ եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

"Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական կամ տեղական բյուջեում եկամուտների կամ ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսում:

Ա.Աշոտյան

Տեղեկանք

"Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

"Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Ա.Աշոտյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ” ՀՀ Կառավարության որոշման նախագծի կապակցությամբ ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների կատարած առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

N	ՀՀ նախարարության և գերատեսչության անվանումը	Առաջարկություններ և դիտողություններ	Ծանոթություն
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Առաջարկություններ և դիտողություններ չունի	-
2.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Առաջարկություններ և դիտողություններ չունի	-
3.	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	Առաջարկություններ և դիտողություններ չունի	-
4.	ՀՀ ոստիկանություն	Առաջարկվում է 3) լրացումը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <table><tr><td>030500</td><td>Իրավա-գիտու-թյուն</td><td>62 62.1 62.2 68 68.1 68.2</td><td>Իրավագիտության բակալավր Մանկավարժության բակալավր, ուսուցիչ Ոստիկանության բակալավր Իրավագիտության մագիստրոս Մանկավարժության մագիստրոս Ոստիկանության մագիստրոս</td></tr></table>	Ընդունելի է մասամբ, քանի որ ՀՀ ոստիկանական գործունեության ոլորտում իրականացվող բարեփոխումները նպատակ են հետապնդում իրականացնել նաև կրթական ոլորտի բարեփոխումներ՝ ուղղված ոստիկանական կադրերի պատրաստմանը:

Ա.Աշոտյան